ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՕՎԵՐ ՓԼԵՅ ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/56 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
4	Ժեջիանգ Բի Յանգ Իմյուզմենթ	Ժեջիանգ Բի Յանգ Իմյուզմենթ Իքուիփմենթ ԿՈ	Ճոճանակները պետք է պատված լինեն ամուր ռետինե շերտով: Շղթայի ստորին մասը պետք է լինի պլաստիկով փաթաթված՝ երեխաների ձեռքերի անվտանգության ապահովման նպատակով: Պլաստիկը պետք է նախատեսված լինի բոլոր եղանակային պայմանների համար և երկար տարիներ պահպանի իր ամրությունն ու արտաքին տեսքը: Նման շղթաները պետք է համապատասխանեն հանրային մանկական խաղահրապարակներում օգտագործման թույլատրելի պահանջներին: Շղթաների ծայրերին պետք է առկա լինեն պտուտակով փակվող կախիչներ՝ ճոճանակը կախելու համար: Կախիչների ներքին բացվածքը պետք է լինի 12/18 մմ, շղթայի ձողի հաստությունը՝ 5 մմ: Շղթան ճոճանակ-օրորոցին պետք է ամրացվի ինքնափակվող M8 մանեկներով: Մետաղական բոլոր մասերը պետք է լինեն ռետինապատ՝ վնասվածքներից պաշտպանվածություն ապահովելու նպատակով: Նստարանի չափսը պետք է լինի 440 × 175 մմ, ճոճանակի ընդհանուր չափսերը՝ 440 × 320 × 240 մմ: Օրորոցի ներքին չափսերը (երկարություն / լայնություն / բարձրություն)՝ 33 /

			22 / 19 սմ: Քաշը՝ մոտ 5 կգ: Կախիչը պետք է պատրաստված լինի բարձրորակ մետաղից, առանձնանա ամրությամբ և երկարակեցությամբ: Այն պետք է համալրված լինի ամրակների ամբողջական հավաքածուով (պտուտակներ, տափօղակներ և մանեկներ), ինչը թույլ կտա իրականացնել հավաքում փայտի վրա , մետաղական կամ աղյուսե հիմքերի վրա: Կախիչը պետք է նախատեսված լինի մինչև 200 կգ ծանրաբեռնվածության համար և համալրված լինի առանցքակալներով՝ սահուն շարժում ապահովելու նպատակով: Բացի այդ, կախիչը պետք է հնարավոր լինի օգտագործել նաև ցանցաճոճ կամ մարզական գույքի կախման համար: Բաղադրություն Կախիչ (հավաքված վիճակում) — 2 հատ Անկերային պտուտակ 10×85 — 4 հատ Պտուտակ 10×80 — 4 հատ վեցակողմ պտուտակ 10×80 — 4 հատ Տափօղակ 10 մմ — 4 հատ մանեկ Մ10 — 4 հատ Ամրացմամբ կախիչ 8 մմ — 2 հատ

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

СПЛАЙ ГРУП ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/56 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	наименование производителя	технические характеристики
4			